ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

<< 25 >> << ապրիլի >> 2017թ. N 50
ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 5-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջներով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2017 թվականի ներքին աուդիտի հաստատված ծրագրի շրջանակներում, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությունում անցկացնել 2017 թվականի առաջին եռամսյակում իրականացված գնումների գործընթացի համապատասխանության աուդիտ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Վասակ Կարապետյանի, ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետներ Նորայր Կարապետյանի և Հասմիկ Ավետիսյանի կողմից:
2. Խմբի աշխատանքներին մասնակից դարձնել մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի կողմից սահմանված գնումների համակարգողներին և պատասխանատու ստորաբաժանման ղեկավարներին:
3. Աուդիտի անցկացման ժամկետը սահմանել 4 աշխատանքային օր՝ աշխատանքները սկսել 2017 թվականի ապրիլի 25-ին, ավարտել 2017 թվականի ապրիլի 28-ին:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ